# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 27 " հունիսի 2013թ.

№ 61-Ա

## «ՀԱՐԹԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետով, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. 2013թ. հուլիսի 1-ից լուծել «Հարթաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սիրազարդ Մկրտչյանի հետ 2011թ. դեկտեմբերի 12-ին կնքված N 72 աշխատանքային պայմանագիրը՝ նրան նշանակելով նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից այն զբաղեցնելը:

Հիմք՝ Ս. Մկրտչյանի անձնական դիմումը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա.ԴՈՂՈՒՆՑ

2013թ. հունիսի 27
ք. Կապան